Ալեքսանդր Շիրվանզադե

Թիֆլիսի Յանկիները

Նավթային հողերի աճուրդը վերջացել է: Հետևանքները հայտնվել են: Գրքերը հանդարտվում են: Երեկո է: Բաքվի ժողովարաններում ասեղ գցելու տեղ չկա: Հաղթողներ, հաղթվողներ, հանդիսականներ, բոլորն այնտեղ են:

Ընդհանուր խոսակցության նյութը աճուրդի հետևանքներն են: Նրանք, որոնց վրա հող է մնացել, ըստ երևույթին ուրախ են, բայց ներսներում որդեր են պարում: նրանք, որոնց վրա հող չի մնացել, արտաքնապես անտարբեր են, բայց նախանձը կրծում է նրանց սիրտը:

Թիֆլիսեցիներն այլևս ընդհանուր ուշադրություն չեն գրավում, թեև շատ են աշխատում աչքի ընկնել: նրանք իրար հետ ինչ-որ քչփչում են, մերթ հեռանում, մերթ մոտենում: Թե ինչ են խոսում աստված գիտե: Բայց դեմքերը արտահայտում են ինչ-որ դավադիրների ոգի: Թվում է, որ նրանք ինչ որ խորհում են, որոշում, ինչ-որ ծրագիր են ուզում իրագործել: Մի ծրագիր, որի մեջ առաջին տեղն են բռնում խեղճ թիֆլիսեցիների գրպանները: Այն թիֆլիսեցիների, որոնք միամտություն են ունեցել իրանց վերջին կոպեկները հավատալով այդ մարդկանց: Մի միջնորդ աղվեսի կերպարանքով և խաչագողի աչքերով մոտենում է մերթ մեկին, մերթ մյուսին, քաշում անկյուն ու քչփչում: Ես դիտում եմ հեռվից: Ահա անցնում է ուղտի քայլերով մի չափից դուրս երկայն մարդ: Ասում են «Զոռբա» ընկերության ներկայացուցիչն է: Նա ուրախ է: Նրա վրա հող է մնացել: Բայց մի այնպիսի թանկ գնով, որ երկայն մարդուն ավելի երկայնացրել է: Նա ուրախ է, բայց և չափազանց հուզված, վասնզի ներքուստ զգում է, որ իր ընկերների գրպանը վտանգի է ենթարկվել:

Նրան մոտենում է «Զանավար» ընկերության ներկայացուցիչը: Սրա վրա հող չի մնացել . ուստի նախանձում է իր հայրենակցին: Տեղի է ունենում նրանց մեջ հետևյալ դիալոգը որ ես լսում եմ բառ առ բառ:

Մաթոս Յաղլչյանց («Զանավար» ընկերության ներկայացուցիչ). Լագլագյանց, շնորհավորում եմ:

Լագլագյանց (քիթը վեր քաշելով այնպես, ինչպես հինգ տարեկան քիթը անմաքուր երեխա). Շնորհակալ եմ:

Յաղլչյանց. Ամա թանկ ես վերցրել: (Ասում է և իսկույն վարտիքը վեր քաշում):

Լագլագյանց (ոտները չոռելով). Դու ի՞նչ ես հասկանում թանկ է, թե չէ:

Յաղլչյանց (դարձյալ փոխանը փորի վրա վեր քաշելով) . Վա, ո՞նց թե չեմ հասկանում:

Լագլագյանց. Բաս, դա մածուն չէ, թան չէ, եղ չէ, պանիր չէ, սմետանա չէ, տվորոգ չէ, դա նավթային արդյունաբերություն է:

Յաղլչյանց. Պաժալստա, ավելորդ մի խոսիր: Եթե կամենաս, կասեմ ինչ նպատակով ես վերցրել այդ հողը այդքան թանկ: Դու անպատճառ ուզում ես գործ սկսել, որպեսզի ինքդ դիրեկտոր ընտրվես և չաղ ռոճիկ ստանաս: Եթե հող չվերցնեիր դու և ընկերներդ պարտավոր էիք հավաքած փողերը վերադարձնել բաժնետերերին: Իսկ այդ ձեռնտու չէր լինի: Կյանքումդ հարյուր ռուբլուց ավել ռոճիկ չես ստացել, հիմա ուզում ես ուրիշի փողերով նավթարդյունաբեր դառնալ: Ինչիդ է պետք: Խոմ քո գրպանից ոչինչ չի գնալ, եթե ընկերությունը անդունդ գլորվի: Կարծեմ դու քո բաժինների ինը տասնորդականը ծախել ես, այն էլ շահով ու գլուխդ ազատել: Հը՛մ, հասկանո՞ւմ եմ միտքդ, թե՞ չէ:

Լագլագյանց. Սուտ ես ասում: Դու նախանձում ես, որովհետև ձեր ընկերության վրա հող չի մնացել: Յաղլչյանց (փոխանը վեր քաշելով). Սարսաղ:

Լագլագյանց (քիթը վեր քաշելով) . Սարսաղը դու ես, ու ձեր փայշչիկները, որ քեզ նմանին ներկայացուցիչ են ընտրել:

Յաղլչյանց . Խե՞ (բարկանալիս դիմում է իր ծննդավայրի բարբառի օգնությանը): Խե՛, քեզանից պակա՞ս եմ: Դու ո՞վ ես:

Լագլագյանց . Դու ո՞վ ես, դո՞ւ: Տո, գնա տվորոգ ծախելու, էէ՛...

Յաղլչյանց . (կատաղած ուզում է բռնել խոսակցի օձիքից) . Այ, ես քո...

Սպասավոր . Барин, здесь нельзя драться:

Յաղլչյանց . (ուշքի գալով). Ես քո հախից Թիֆլիսումը կգամ: Համբերիր:

Նրանք բաժանվում են:

Լագլագյանցը գնում է բուֆետ մի-երկու բաժակ կոնյակով իր կատաղությունը հագեցնելու: Յաղլչյանցը մոտենում է աղվեսանման միջնորդին և սկսում է ավելի եռանդով քչփչալ:

Հետևյալ երեկո նույն ժողովարանի դահլիճում: Ներկա են Թիֆլիսի բոլոր յանկիները, բացի մի քանիսից և Լագլագյանցից. Յաղլչյանցի դեմքը արտահայտում է անչափ ուրախություն: Նա անսովոր շարժման մեջ է, վազում է այս ու այն կողմ, ձեռներով, ոտներով պես-պես տարօրինակ շարժումներ անելով, երկայն մորուքը տմբտմբացնելով և յուղոտ փողկապն ուղղելով: Սպասավորները քթների տակ ծիծաղում են, բայց, փորձված լինելով, գիտեն, որ այսօր այդ անծանոթ հյուրը ճոխ ընթրիք է անելու: Ուստի ամեն ոք աշխատում է գրավել նրան դեպի իր սեղանը:

Յաղլչյանցը աղվեսանման միջնորդի հետ նստում է մի սեղանի մոտ և գոռում.

Человек, подай карточку .

Նա արդեն երևակայում է իրան նավթարդյունաբեր, դիրեկտոր, կառավարիչ: Նրա փոքրիկ գլխում արդեն նավթի շատրվան է խփում: Բանն այն է, որ այսօր նա ցերեկով մի ձեռնարկություն է արել: «Ջանավար» ընկերության համար գնել է մի կտոր հող ահագին գումարով և արքունական գանձարանին մեծ հարկ վճարելու պայմանով և ուրախ է: Հոգու խորքում նա զգում է, որ

մսավաճառներիը, կոշկակարներից, դերձակներից և կվաս վաճառողներից բաղկացած խեղճ ընկերությանը նա անդունդ է գլորում: Բայց ինչ փույթ: Խոմ իր փողը չէ: Նա ինքը կյանքում իսկի փողի երես էլ չի տեսել: Իսկ այժմ երևակայում է իրան նավթարդյունաբեր: Հուռա, կեցցե՛ թիֆլիսեցիների միապետությունը և գրպանը: Սատանան տանի տվորոգը և մածունը: Մոտենում է նրան մի թիֆլիսեցի .

Շնորհավորում եմ, Յաղլչյանց, եթե ճիշտ է:

Ճիշտ է:

Բայց ասում են շատ թանկ ես գնել:

Ո՞վ է ասում:

Բաքվեցիները:

Քո բաքվեցիները ոչինչ չեն հասկանում:

Էհե. վաղո՞ւց է, որ դու հմուտ նավթարդյունաբեր ես դարձել: Թանկ ես վերցրել:

Թանկ չէ, ինչո՞ւ Մանթաշյան, Շումախեր, Շիբաև վերցրել են:

Բայց նրանք այդ գներով չեն վերցրել, վերջապես իրենց սեփական փողերով են վերցրել: Եթե վնասվեն էլ, ոչ ոքի առջև պատասխանատու չեն: Իսկ դու ուրիշների ներկայացուցիչ ես: Կարծեմ պարտավոր էիր զգույշ վերաբերվել դեպի այդ խեղճ մսավաճառների, դերձակների ու կոշկակարների վերջին կոպեկները:

Դու ոչինչ չես հասկանում: Ես գիտեմ ինչ եմ անում:

Իսկ դու երեկ կատաղած էիր Լազլազյանցի դեմ: Ինքդ այսօր նրանից հարյուր անգամ ավելի վատ բան ես անում:

Ներողություն, ախպեր, փողը իմը չէ՞, ինչ ուզում եմ, անում եմ:

Ոչ, պարոն, փողը քոնը չէ, դու իսկի փող էլ չունիս: Խոմ ես ճանաչում եմ քեզ:

Ես հարուստ եմ, աղաղակում է Յաղլչյանցը կատաղած:

Մի՞թե, զարմանում է նրա խոսակիցը: Այո՛, ես քեզ նման հինգին կկերակրեմ:

Խոսք չունիմ, մածունով ու տվորոգով կարող ես կերակրել:

Յաղլչյանցը ամաչում է ու գլուխը կրծքին թեքում և սկսում թիֆլիսեցիների հաշվին խպշտել հինգ պորցիա կերակուր: